

Առաքման Կանոնակարգ

Առաքման Արժեքը

Առաքումը Երևան քաղաքում 20.000 ՀՀ դրամից բարձր գնումներ կատարելու դեպքում՝ առաքումը կատարվում է անվճար:

Առաքումը Երևանից դուրս 1 կիլոմետրի արժեքը կազմում է 120 ՀՀ դրամ, իսկ բեռնատարով՝ 1 կմ արժեքը 250 դրամ, 100 կմ-ից բարձր հաշվարկվում է 1 կմ 200 դրամով:

Առաքման Ժամկետներ

Երևանի տարածքում առաքումը կատարվում է Ձեր իսկ նշած ժամանակում:
Երևանից դուրս առաքում կատարելու դեպքում հարկավոր է հաշվի առնել հավելյալ ժամանակի պահանջ:

Ֆորս-Մաժոր

Եթե որևէ պատճառով առաքումը ֆորս-Մաժորային պայմաններում՝ (եղանակային, աղետների, ճանապարհատրանսպորտային, խցանումների կամ այլ) պատճառներով հնարավոր չէ իրականացնել Ձեր նշված ժամանակահատվածում, ապա մեր աշխատակիցները Ձեզ հետ կկապվեն Ձեր նշած հեռախոսահամարով: Համաձայնության չգալու դեպքում դուք կարող եք չեղարկել պատվերը, որի արդյունքում 3 աշխատանքային օրվա ընթացքում վճարված գումարը ձեզ ետ կվերադարձվի:

Եթե առաքումը տեղի չի ունեցել հանգամանքի(ների) պատճառով, որոնք չեն գտնվում մեր տիրապետության տակ (օրինակ սխալ առաքման հասցե, ստացողը տեղում չի և այլն), ապա գանձված գումարը ետ չի վերադարձվում:

Վերոհիշյալ պատճառներով առաքում չիրականացնելու դեպքում, մենք կապ ենք հաստատում պատվիրատուի հետ՝ նշած կոնտակտային տվյալներով:

Առաքում Տարածքային Սահմանափակմամբ

Պատվերները, որոնք պետք է առաքել հիվանդանոցներ, հյուրանոցներ, ընկերություններ, համալսարաններ կամ այլ հասարակական վայրեր երաշխիք չեն կրում, սակայն հիմնական դեպքերում առաքումը տեղի է ունենում ձեր հայտի համաձայն: Եթե ձեր պատվերը անհրաժեշտ է առաքել վերոհիշյալ վայրերից մեկում, ապա խնդրում ենք ներմուծել պատվերի երկրորդ քայլում ստացողի անունը, հեռախոսահամարը և հնարավորինս մանրակրկիտ տեղեկատվություն ստացողի մասին:

Հիվանդանոցների պարագայում մեզ նաև անհրաժեշտ է հիվանդի բաժանմունքն և սենյակի համարը: Խնդրում ենք նաև հաշվի առնել այն հանգամանքը որ որոշ հիվանդանոցներ չեն թույլատրում ծաղիկների առաքում հիվանդասենյակ, նման դեպքերում պատվերը թողնվում է հիվանդանոցի ընդունարանում պատվիրատուի համաձայնությամբ: Որոշ բաժանմունքներում արգելված է առհասարակ ծաղիկների առկայությունը, նման դեպքերից խուսափելու նպատակով պատվիրատուն պարտավոր է պատվերն իրականացնելուց առաջ հարցում կատարել տվյալ հիվանդանոցին:

Եթե ցանկանում եք ուղարկել ծաղիկներ հյուրանոց, ապա հարկավոր է նշել սենյակի համարը (հնարավորության դեպքում) և սենյակը ամրագրողի անուն ազգանունը:

Մագա ծաղկի սրահը գումարը չի վերադարձնում նման սահմանափակումների ենթարկված պատվերների դեպքում:

Մերժված Առաքում

Ստացողի կողմից մերժված պատվերի գումարը Մագա ծաղկի սրահը իրավունք ունի պատվերի գումարը ետ չվերադարձնել:

Պատվերի փոփոխում

Պատվիրատուն հնարավորություն ունի պատվերը փոփոխելու: Այս դեպքում հարկավոր է կապ հաստատել կայքում նշված կոնտակտային հեռախոսահամարներով: Պատվերները ենթակա են փոփոխության առնվազն 10 ժամ առաջ մինչ նշված առաքման ժամկետը:

Որակի Քաղաքականություն

Մեր ծաղկային ձևավորումներ և ծաղկեպսակները պատրաստվում են բնական թարմ ծաղիկներից: Յուրաքանչյուր ծաղկեպսակ յուրովի մոտեցմամբ է պատրաստվում հնարավորինս նմանեցվում նկարին, սակայն կարող է նկարից ավելին լինել, բայց ոչ պակաս:

Նկարները, որոնք օգտագործված են կայքում, պատկանում են Մագա ծաղկի սրահին և համարվում են Մագա ծաղկի սրահի տնօրեն Մուրադ Մկրտչյանի հեղինակային աշխատանքները:

Գումարի վերադարձման հարցում և պահանջ

Եթե դուք ունեք դժգոհություններ կապված պատվերի հետ, ապա կարող եք կատարել գումարի ետ վերադարձման հարցում առաքումից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում: Խնդրում ենք բողոքների դեպքում ուղարկել հաղորդագրություն էլ փոստին, նամակում նշելով պատվերի հերթական համարը:

Եթե ունեք դժգոհություններ կապված պատվերի որակի հետ խնդրում ենք նամակում նաև կցել պատվերի թվային նկարը որում տեսանելի է ձեր դժգոհությունը:

Վճարման հետ կապված խնդիրներ

Եթե որևէ պատճառով, դուք ներմուծել եք վեբկայք սխալ կրեդիտ-քարտի կամ վճարային ինֆորմացիա, ապա հնարավոր չի լինի իրականացնել պատվերը:

Այս պարագայում մեր աշխատակիցները կփորձեն կապ հաստատել Ձեզ հետ՝ առկա խնդիրները լուծելու նպատակով, սակայն Մագա ծաղկի սրահը պատասխանատվություն չի կրում նման խնդիրների դեպքում:

Արտառժույթ

Չնայած կայքում առկա է ծաղկեպսակի արժեքը տարբեր արտառժույթներով (USD, AMD, RUB), սակայն վճարումները միշտ կատարվում են ՀՀ դրամով: Մագա ծաղկի սրահը ներկայացնում է արտառժույթները, բայց նրանք միշտ մոտավոր են:

Պատվերի Չեղարկում

Եթե դուք չեղարկում եք պատվերը առաքման ժամկետից առնվազն երկու օր առաջ, ապա ձեր վճարված գումարը ամբողջովին Ձեզ ետ կվերադարձվի:
Հակառակ դեպքում պատվերի գումարը ետ չի վերադարձվում:

Կրկնօրինակված Պատվերներ

Եթե որևէ պատճառով դուք կատարել եք կրկնօրինակ պատվեր(ներ), ապա կարող եք կապվել մեզ հետ կայքում նշված կոնտակտներով և մենք կչեղարկենք պատվերը:
Ամբողջովին ետ վերադարձնելով կրկնօրինակված պատվերների գումարը:

Ապրանքում փոփոխության Կանոնակարգ

Ըստ սեզոնի, պավերը կարող է ենթարկվել փոփոխության, այսինքն՝ սեզոնային բույսերը կփոխարինվեն համարժեք այլ բույսերով կամ ավելի որակյալ բույսերով:

Եթե անհրաժեշտ է կատարել փոփոխություն ապրանքի հիմնական ծաղիկներում, ապա մեր աշխատակիցները կփորձեն մինչ փոփոխությունը Ձեզ հետ կապ հաստատել: Վարդերը երբեք չեն ենթարկվում փոփոխության առանց հաճախորդի համաձայնության:

Գունային Փոփոխությունների Կանոնակարգ

Մեր դիզայներները կարող են փոփոխել ծաղիկների գույները, միայն այն դեպքում, երբ փոփոխությունները տեղի են ունենում կոմպոզիցիայի ընդհանրական նույն երանգների գամմայում:

Առավել կտրուկ գունային փոփոխությունների դեպքում, մեր մասնագետները անպայման կկապվեն Ձեզ հետ, և միայն Ձեր համաձայնության դեպքում կկատարվի գունային փոփոխություն:

Առաքման Կանոնակարգ Հատուկ Օրերին

Հատուկ օրերին կատարված պատվերները (Օրինակ՝ Նոր Տարի, Վալենտին, Մարտի 8 և այլն), երբ առկա են զանգվածային շատ պատվերներ, որոշ կանոններ կարող են ենթարկվել փոփոխության:

- Պատվերի փոփոխություն կամ չեղարկում կատարելը հնարավոր է տեղի չունենա:
- Որոշ դեպքերում մենք չենք կարող երաշխավորել ձեր պատվերի առաքման ճշգրիտ ժամանակը, և այն կարող է սպասել իր հերթին:

Վերադարձի Կանոնակարգ

Բնական ծաղկեփնջեր, կոմպոզիցիաներ, ծաղկեպսակներ, բույսեր, ծաղիկներ եւ այլ
նյութեր ենթակա չեն վերադարձի: